ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

https://doi.org/10.59982/18294359-25.2-pi-10

Միլենա Բաբկենի Ղազարյան
Հայցորդ
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
milena.ghazaryan@gmail.com

Ամփոփագիր

Գիտական հոդվածը նվիրված է պետության տարածքային ամբողջականության լիարժեք ապահովմանն ուղղված պետական իշխանության և տեղական ինքնակառավարման փոխգործակցության և արդյունավետ համագործակցության հիմնախնդիրների հետազոտությանը: Մասնավորապես, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայունության առկայությունը, ինչպես նաև այդ մարմինների միջև համակարգված ու արդյունավետ համագործակցությունը դրական ազդեցություն են ունենում պետության տարածքային ամբողջականության ապահովմանն ուղղված լիազորությունների իրականացման վրա:

Անդրադառնալով պետության տարածքային ամբողջականության ապահովման սուբյեկտների կազմին, կատարվել է եզրահանգում, որ հանրային իշխանության մարմիններին միջև փոխադարձ գործակցությունը, ինչպես նաև պետության միասնությանն ու տարածքային ամբողջականությանը սպառնալիքների կանխատեսման ու դրանց չեզոքացման համար անհրաժեշտ սահմանադրաիրավական կառուցակարգերն ուղղված են Հայաստանի Հանրապետության ընդհանուր շահերի բավարարմանը, այդ թվում՝ հենց հանրային իշխանության մարմինների միջև ծագած վեճերի կանխարգելմանն ու լուծմանը:

Այդպիսիք կարող են դիտարկվել, մասնավորապես՝ պետական իշխանության ու կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև պետության տարածքային ամբողջականության ապահովման հարցերով լիազորությունների արդյունավետ ու համաչափ բաշխման երաշխավորումը, սեփական պատասխանատվությամբ հանրային իշխանության մարմինների լիազորությունների ինքնուրույն ու արդյունավետ իրականացումը, պետական սահմանի սահմանամերձ վարչատարածքային միավորների շահերի ու կարծիքների հաշվի առնելու առաջնահերթությունը, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման երաշխավորման շրջանակում պետության տարածքային ամբողջականության ու միասնության ապահովման ընկալումը՝ որպես պետության ինքնիշխանության դրսևորման անհրաժեշտ պայման:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, պետության տարածք, տարածքային ամբողջականություն, պետական իշխանություն, տեղական ինքնակառավարման մարմին:

Ներածություն

Պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները չեն կարող գործել ինքնին: Դրանց գործադրման համար առանձնահատուկ դերակատարություն ունեն պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների՝ համեմատաբար ինքնուրույն ու անկախ, սակայն մշտապես փոխգործակցող համակարգերը, որոնց գործառնական լիազորությունները ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Նման փոխգործակցության շրջանակներում և այդ մարմինների միջև արդյունավետ համագործակցության ապահովման տեսանկյունից պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայունության առկայությունը, ինչպես նաև այդ մարմինների միջև համակարգված ու արդյունավետ համագործակցությունը դրական ազդեցություն են ունենում պետության տարածքային ամբողջականության լիարժեք ապահովմանն ուղղված լիազորությունների իրականացման վրա:

Ակնհայտ է, որ տարածքային գերակայությունը դա պետության լիարժեք ու բացառիկ իշխանությունն է իր ամբողջ տարածքի նկատմամբ և այդ տարածքի սահմաններում: Այս առումով, պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու և ողջ տարածքում ինքնիշխանությունը պաշտպանելու գաղափարն ինքնին ուղղակի կամ անուղղակիորեն իրեն արտացոլումն ունի յուրաքանչյուր պետության սահմանադրական կարգավորումներում [Темираев, 123-124]:

Այդ իմաստով, պետության տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական պահպանման ու ապահովման համակարգում իրենց ուրույն տեղն ունեն Ազգային ժողովը, կառավարությունը, դատական իշխանությունը և տեղական ինքնակառավարման մարմինները:

Սահմանադրության 4-6-րդ գլուխները նախատեսում են ժամանակակից կառավարման խորհրդարանական համակարգ, որը հստակորեն իրականացնում է Ազգային ժողովի և Կառավարության միջև իշխանությունների գործառութային բաժանում: Ընդ որում, սահմանադրական այդ ինստիտուտների փոխգործակցության շրջանակում Սահմանադրությունն ամրագրել է Ազգային ժողովի առանցքային դերակատարումը, այդ թվում ոչ միայն երկրի պաշտպանության և տարածքային ամբողջականության ապահովման, այլև պետության տարածքային միասնության ու ամբողջականության ապահովման գործում:

Պետական իշխանության ապակենտրոնացման համակարգում, հանրային իշխանության մարմինների համակարգի կայացմանն ու զարգացմանը զուգընթաց, առանձնակի կարևորություն է տրվում նաև պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների այնպիսի բաշխմանը, որով երաշխավորվում է տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում պետական քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական կարգավորումների տրամաբանությունից չի հետևում, որ Ազգային ժողովն ուղղակիորեն օժտված է տարածքային ամբողջականության ապահովման գործառույթով, այդուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ խորհրդարանի մասնակցությունը տարածքային ամբողջականության ապահովման մասով անուղղակիորեն առնչվում է պետության ներքին և արտաքին քաղաքականություն իրականացման շրջանակների հետ:

Այսպես, օրինակ, Սահմանադրության, 109-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Կառավարությունը իր համար ընդունելի ուղղումներով օրինագիծը քվեարկության դնելու պահանջի իրավունք ունի միայն այն օրինագծերի դեպքում, որտեղ օրենսդրական նախաձեռնության բացառիկ իրավունքը պատկանում է իրեն: Այստեղ խոսք կարող է լինել Սահմանադրությամբ սահմանված, մասնավորապես, միջհամայնքային միավորումների ստեղծման (հոդվ. 189, մաս 1), կամ վարչատարածքային բաժանման վերաբերյալ օրինագծերի մասին (հոդվ. 121):

Ընդ որում, վարչատարածքային բաժանման հետ անմիջական աղերսներ ունի վարչատարածքային միավորների տարածքային փոփոխությունների և տարածքային ամբողջականության ապահովումը: Օրենսդրական նախաձեռնության նման բացառիկ իրավունքի ամրագրման վերաբերյալ սահմանադրական կարգավորումները թույլ են տալիս խորհրդարանին առանց Կառավարության անհարկի միջամտության իրականացնել իր օրինաստեղծ գործառույթը, և հակառակը, եթե Կառավարությունը չի ներկայացնում օրենսդրական նախաձեռնություն տարածքային ամբողջականության արդյունավետ ապահովման նպատակով վարչատարածքային փոփոխությունների կատարման վերաբերյալ, ապա Ազգային ժողովը ինքնուրույն չի կարող նախաձեռնել այդպիսի օրենսդրական գործընթաց:

Միաժամանակ, պառլամենտարիզմի ու խորհրդարանական տրամաբանությանը համապատասխան՝ Ազգային ժողովը ինքուրույնաբար է որոշում վարչատարածքային փոփոխությունների կատարման վերաբերյալ Կառավարության նախաձեռնած օրենսդրական նախագծերի ճակատագիրը, դրանով մասնակից դառնալով պետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրական առաքելությանը:

Առանձին երկրների սահմանադրական կարգավորումների շրջանակում [Конституция в XXI веке, с.261], [Сравнительное конституционное право, с. 24-57], ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածով նույնպես սահմանվել է Ազգային ժողովի հիմնական գործառույթները՝ դրանով Սահմանադրության տեքստում ուղղակիորեն ուրվագծելով խորհրդարանի տեղն ու դերը ոչ միայն սահմանադրական մարմինների համակարգում, այլ նաև համապետական հարցերի, այդ թվում՝ երկրի տարածքային ամբողջականության ապահովման գործում:

Ակնհայտ է, որ Սահմանադրության նորմերի բովանդակությունից նաև բխում է, որ Ազգային ժողովն ունի Կառավարության գործունեության վրա ազդելու տարբեր կառուցակարգեր (պատգամավորական հարցումներ, խմբակցությունների հարցապնդումներ և այլն):

Բացի այդ, Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա իր ներգործունեությունը կարող է ունենալ Կառավարությունը՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման տեսանկյունից: Այսպես, պետական սահմանների և տարածքային ամբողջականության ապահովման վերաբերյալ Կառավարությունն ինքն է սահմանում իր կողմից ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը, միաժամանակ, պահանջելով, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի բովանադակությամբ և ուղղումներով:

Սահմանդրության 4-րդ գլխի կարգավորումների համատեքստում Ազգային ժողովը, որպեսզի կարողանա արդյունավետ իրականացնել օրինաստեղծ իր գործառույթը, Սահմանադրությունը այդ մարմնի սահմանադրական կարգավիճակին

բնորոշ՝ վերապահում է անհրաժեշտ գործառնական լիազորություններ, որոնք կիրառման ոլորտների հետ մեկտեղ կազմում են նրա իրավասությունը:

Այս տրամաբանությամբ է պայմանավորված պետության միասնականության և տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում պետության վարչատարածքային բաժանման գործառույթի կարևորությունն ու կիրառական նշանակությունը:

Բացի այդ, Սահմանադրությամբ 121-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովը Կառավարության առաջարկությամբ ընդունում է օրենք, որով սահմանվում է ՀՀ վարչատարածքային բաժանումը, որն ըստ էության, ընկալվում է որպես ՀՀ պետական սահմանների իրավական ամրագրում և տարածքային ամբողջականության որոշակիացում:

Այնուհետև, պետության տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական ապահովման ոլորտում խիստ կարևորվում են կենտրոնական և տարածքային գործադիր իշխանության (կառավարման) մարմինների դերն ու նշանակությունը: Սահմանադրական նորմերի տրամաբանության և այդ մարմինների գործունեության գործառնական նշանակության իմաստով թեև Կառավարությանն է վերապահված գործադիր իշխանության բարձրագույն մարմնի սահմանադրական առաքելությունը պետական քաղաքականության մշակման ու իրականացման, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների ընդհանուր ղեկավարման վերաբերյալ (հոդվ. 146), այդուհանդերձ պետական կառավարման համակարգի կարևոր հարցերից են՝ երկրի պաշտպանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը և պետության տարածքային ամբողջականության ապահովումը:

Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության 14-րդ հոդվածի կարգավորումների բովանդակությունից հետևում է, որ պետության տարածքային ամբողջականության ապահովումն անմիջականորեն վերապահված է Հայաստանի Հանրապետության զինված ուժերին, այնուամենայնիվ, նույն Սահմանադրության 155-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությունից բխում է, որ զինված ուժերը գտնվում են Կառավարության ենթակայության ներքո, և Կառավարությունն է իրավասու որոշում կայացնել Զինված ուժերի կիրառման վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Զինված ուժերի ղեկավարմանը, ապա այն իրականացնում է պաշտպանության նախարարը՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակում, որոնք մշակվում են Անվտանգության խորհրդի կողմից (հոդվ. 155, մաս 2), որը գլխավորում է վարչապետը (հոդվ. 152, մաս 1):

Պետության տարածքային աբողջականության ապահովման ոլորտի կառավարման համակարգում զինված ուժերի ղեկավարումն ու օպերատիվ կառավարումը պետք է լինեն այնպիսին, որ հնարավորություն ընձեռնվի ավելի օպերատիվ ու ավելի արդյունավետ ապահովել պետական սահմանների անձեռնմխելիությունը և տարածքային ամբողջականությունը՝ պաշտպանելով արտաքին որևէ միջամտություններից:

Այսպիսով, Կառավարությունը ոչ միայն պետական մյուս մարմինների (Զինված ուժերի գլխավոր շտաբի, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության և այլն), տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին պարտավոր է իր իրավասության շրջանակներում

իրագործել պետության տարածքային ամբողջականության ապահովումը, այլև Սահմանադրության 156-րդ հոդվածի ուժով Ազգային ժողով ներկայացվող տարեկան զեկույցի շրջանակներում տեղեկատվություն ներկայացնել հիշյալ նպատակների իրագործման վերաբերյալ (հոդվ. 87-րդ, մաս 2):

Պետության պաշտպանության և տարածքային ամբողջականության անմիջական ապահովման ոլորտում պետական կառավարման մարմիններն իրագործում են Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը և իրականացնում պաշտպանության ոլորտում՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Պաշտպանության մասին» և այլ օրենքներով սահմանված լիազորություններ:

Տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրական լիազորություններից է Կառավարության կողմից ռազմական դրություն հայտարարելը (հոդվ. 119): Ռազմական դրությունը որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակում, վերջիններիս համար լրացուցիչ պարտավորություններ, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների գործունեության հատուկ կարգ նախատեսող հատուկ իրավական ռեժիմ, ուղղված է պետության վրա զինված հարձակմանը դիմակայելուն կամ դրա կանխմանը նպաստող իրավական, կազմակերպական է և տնտեսական պայմանների ստեղծմանը:

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի (05.12.06) 1-ին հոդվածի համաձայն՝ ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ՝ թույլատրելով՝ իրավաբանական անձանց, ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների առանձին իրավունքների ու ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում:

Սույն հետազոտության առարկայի շրջանակում անհրաժեշտ է նկատել, որ ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ղեկավարում է պետության տարածքային ամբողջականությանն ու միասնությանն ուղղված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրության հայտարարման նպատակն է դիմակայել պետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում: Ռազմական դրություն հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջականորեն սպառնում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու:

Պետության տարածքային ամբողջականության ապահովման անհրաժեշտ միջոցառումներից է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության սահմանադրական լիազորության իրականացումը: Սահմանադրության 160-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով» (մաս 1), իսկ Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով (մաս 3):

Եվ վերջապես, պետության տարածքային ամբողջականության ապահովման ոորտում կարևոր տեղ ու դեր ունեն տեղական ինքնակառավարման մարմինները: Սահմանադրության 182-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքին վերապահված են պարտադիր և կամավոր խնդիրներ, որոնք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվում են սեփական և պատվիրակված լիազորությունների միջոցով: Այդպիսիք կարող են լինել՝ սահմանամերձ համայնքների կողմից զինված ուժերի թիկունքի հարցերին վերաբերվող միջոցառումներին օժանդակումը՝ պատերազմի ժամանակ կամ նույնիսկ խաղաղ պայմաններում, ինչպես նաև համայնքի չափահաս տղամարդկանց (կանայք կամավորության հիմունքներով) մասնակցությունը սահմանների պաշտպանությանը և տարածքային ամբողջականության ապահովմանը և այլն:

Ինչ վերաբերում է պետության տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակիչների մասնակցությանը, ապա այն կարող է բազմաբնույթ լինել, այդ թվում՝ սահմանների պաշտպանության, համայնքների անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման գործընթացներում [Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք, էջ 78]:

Ավելին, պետության ինքնիշխանության ներպետական ասպեկտը պայմանավորված է պետության, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից ոչ միայն այլ պետություններին իր պետության տարածքի հանձնման իրավական անհնարինությամբ, այլև իրենց պարտավորությունների շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանության համար [Научно-практический комментарий к Конституции Российской Федерации, էջ 40].

Ընդհանրացնելով, անհրաժեշտ է ուրվագծել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման նպատակով պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության հետևյալ ուղղությունները, որոնց վրա մեր կարծիքով խարսխվում է որոշակի գործընթացների իրագործման երաշխավորում: Դրանք են՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքի պահպանության և պաշտպանության ապահովում,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և այն օրենքների գերակայությամբ, որոնք վերաբերում են վարչատարածքային բաժանմանը, տարածքային քաղաքականության ուղղությունների մշակմանն ու իրականացմանը, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ իրավասության ոլորտներին (օրինակ, ռազմական դրության ժամանակ այդ մարմինների փոխգործակցությանը և այլն),

գ) պետական իշխանության մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, պաշտպանության ու անվտանգության ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ու միջոցառումների ձեռնարկում,

դ) Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգների չեզոքացմանն ուղղված միջոցների ձեռնարկում,

ե) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ ոլորտներում որևէ սուբյեկտի գործունեության արգելում, որի նպատակները կամ գործողություններն ուղղված կլինեն պետության տարածքային ամբողջականության ու միասնության խախտմանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ տարածքային ամբողջականության ապահովման ոլորտում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության կարևոր դրսևորումներից կարող է դիտարկվել տվյալ պետության կազմից վարչատարածքային սուբյեկտների միակողմանի կարգով դուրս գալու կամ վերջիններիս կարգավիճակի փոփոխության արգելումը, որը հիմնականում բնորոշ է դաշնային պետություններին [Нарутто и др., с.93]:

Եզրակացություն

Այսպիսով, անդրադառնալով պետության տարածքային ամբողջականության ապահովման սուբյեկտների կազմին, ինչպես նաև նրանց սահմանադրաիրավական լիազորությունների ընդհանրական ու համակարգային վերլուծությանը, հարկ է նկատել, որ հանրային իշխանության մարմինների միջև փոխադարձ գործակցություն ապահովելու, ինչպես նաև պետության միասնությանն ու տարածքային ամբողջականությանը սպառնալիքների կանխատեսման ու դրանց չեզոքացման համար, թերևս անհրաժեշտ են սահմանադրաիրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետության ընդհանուր շահերի բավարարմանը, այդ թվում՝ պետության ինքնիշխանության պաշպանությանն ու տարածքային ամբողջականության ապահովմանը: Այդպիսիք կարող են դիտարկվել, մասնավորապես՝

1) պետական իշխանության ու կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև պետության տարածքային ամբողջականության ապահովման հարցերով լիազորությունների ինչպես արդյունավետ, այնպես էլ համաչափ բաշխման երաշխավորումը,

2) նույն տարածքային ամբողջականության ապահովման հարցերով և սեփական պատասխանատվությամբ հանրային իշխանության մարմինների լիազորությունների ինքնուրույն ու արդյունավետ իրականացումը,

3) իրավաստեղծ այլ գործունեության շրջանակում անհրաժեշտ ու կարևոր պայման է՝ պետական սահմանի սահմանամերձ վարչատարածքային միավորների շահերի ու կարծիքների հաշվի առնելու առաջնահերթությունը,

4) իշխանությունների բաժանման ու հավասարակշռման երաշխավորման շրջանակում պետության տարածքային ամբողջականության ու միասնության ապահովումը կարող է նաև ընկալվել՝ որպես պետության ինքնիշխանության դրսևորման անհրաժեշտ պայման:

Գրականության ցանկ

1. Нарутто С.В., Шугрина Е.С., Исаев И.А., Алебастрова И.А. Территория в публичном праве, М.: 2013.
2. Темираев А.В., Конституционно-правовое содержание принципа территориальная целостность, Аграрное и земельное право. 2017. 4(148).
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով)՝ ընդունված 06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
4. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք // ընդհանուր խմբագրությամբ **Գ.Դանիելյանի**, Երևանի պետ. համալս., Հայրապետ, 2015:
5. Конституция в XXI веке.Сравнительно-правовые иследование. Отв. ред. профессор **В. Е. Чиркин.** М., 2013.
6. Научно-практический комментарий к Конституции Российской Федерации/ Отв. ред. В. В. Лазарев. - 5-е изд., доп. И перераб. - М.: Спарк, 2011.
7. Сравнительное конституционное право. Отв. ред. Б. Н, Топорнин.М., 2006.

THE PROCESS OF ENSURING THE TERRITORIAL INTEGRITY OF THE STATE IN THE DIALICTIC OF INTERACTION BETWEEN STATE POWER AND LOCAL SELF-GOVERNMENT BODIES

Milena Ghazaryan
Researcher
EUA, Chair of Law
milena.ghazaryan@gmail.com

Abstract

The scientific article is devoted to the study of the problems of interaction and effective cooperation between state power and local self-government aimed at fully ensuring the territorial integrity of the state. In particular, the existence of institutional stability between state authorities and local self-government bodies, as well as coordinated and effective cooperation between these bodies, have a positive impact on the implementation of powers aimed at ensuring the territorial integrity of the state.

Regarding the composition of the subjects of ensuring the territorial integrity of the state, it was concluded that mutual cooperation between public authorities, as well as the constitutional and legal mechanisms necessary to predict and neutralize threats to the unity and territorial integrity of the state, are aimed at meeting the common interests of the Republic of Armenia, including the prevention and resolution of disputes arising between them. public authorities.

These may include, in particular, the guarantee of an effective and proportional distribution of powers between state authorities and local governments on issues of ensuring the territorial integrity of the state, the independent and effective exercise of powers by public authorities under their own responsibility, the priority of taking into account the interests and opinions of border administrative-territorial units of the state border., and the perception of ensuring the territorial integrity and unity of the State within the framework of guaranteeing the separation and balance of powers as a necessary condition for the manifestation of state sovereignty.

Keywords: Constitution, territory of the state, territorial integrity, state power, local self-government

Ներկայացվել է՝ 27.10.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 27.11.2025թ.